

լերի և թաղանթների ճշգրտված տեսությունների հիման վրա տար տեսանկյունից են դիտարկվել ժամանակակից կոմպոզիցիոն նյութերից պատրաստված բարակապատ համակարգերի կաշվարկման պրոբլեմները (ամրություն, հայտնություն, տասանուններ, լարումների կենտրոնացում, ձաքերի առաջացում են): Անգոտորպ շերտավոր սաղերի ու թաղանթների դիրմափեկական կայունության և Ֆլատերի ինդիքներում < և նրա աշակերտները հայտնաբերել են բնութագրիչներ, ուսումնասիրել կառուցվածքի ետկրիտիկական վարքը: Առաջարկել է ձգմանը և սղումմանը տարբեր ձևով դիտարկող նյութերի առաձգականության տեսություն, որը հիմք է ծառայել տարամտող նյութերից պատրաստված սաղերի և թաղանթների ինդիքների հետազոտմանը: < և նրա աշակերտները առաջարկել են բարակ մարմինների մագնիսառաձգակամության վարկածը, որը հնարավորություն է տվել ուսումնասիրել ժամանակակից տեխնիկայի համար մի շարք կարևոր խնդիրներ: ՍՍՄՄ ԳԱ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի նախագահության անդամ, Սովետիկայի ԳԱ մեխանիկների ընկերության պատվավոր անդամ (1976): Գարգետարվել է Աշխատանքային կարմիր դրոշմ շքանշանով:

Երկ. Теория анизотропных оболочек, М., 1961; Теория анизотропных пластин, М., 1967; Общая теория анизотропных оболочек, М., 1974; Магнитопругость тонких оболочек и пластин, М., 1977 (соавт. Г. Е. Багдасарян, М. В. Бельбуекян).

Մ. Բեկուրցիկյան, Վ. Փոսնիկ

ՀԱՄԱՐԱՉՈՒՄՅԱՆ Սերգո Բսկանդարի [ծն. 23.2.1910, Բիտո (Նախիվանի ԻՍՏՇ Օրդուրայի շրջանում)], հայ սովետական ծանրաթև: 1953-ին ավարտել է Երևանի ֆիզիկոմաթմաթիկ ինստիտ: Մանր աթոռայիկայի աշխարհի չեմպիոն (1930), Հայաստանի և Անդրկովկասի չեմպիոն (1930—1934), Սովետական Սիբիրյան չեմպիոն (1933, 34, 35), ՍՍՄՄ սպորտի վարպետ (1934), ՍՍՄՄ սպորտի վաստ. վարպետ (1961): 1938—41-ին եղել է «Մպարտակ» ԿԸ, 1945—48-ին՝ ֆիզկուլտուրայի հանրապետական կոմիտեի ծանր աթոռայիկայի մարզիչ:

ՀԱՄԱՐԱՉՈՒՄՅԱՆ Վիկտոր Համազասպի [ծն. 5(18).9.1908, Թիֆլիս], հայ տեսական և արտաֆիզիկոս, տեսական *առաջաֆիզիկայի* սովետական դպրոցի հիմնադիր: ՍՍՄՄ ԳԱ ակադեմիկոս (1953), ՀՍՄՏ ԳԱ ակադեմիկոս (1943) և պրեզիդենտ (1947-ից), Երևանի համալսարանի պրոֆեսոր (1947-ից): Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս (1968, 1978): ՍՄԿԿ անդամ 1940-ից: ՀՍՄՄ ԳԱ *Բյուրակային աստղադիտարանի* հիմնադիր և ղեկավար (1946): ՀՍՄՏ «Ֆիզիոնիկ» ընկերության վարչության նախագահ (1947-ից): Հայկական սովետական հանրագիտարանի առաջին գլխավոր խմբագիր և խմբագրական կոլեգիայի նախագահ: Հայկական ՍՍՀ (1940) և Վրացական ՍՍՀ (1968) գիտության վաստ. գործիչ:

1948—55-ին եղել է Միջազգային աստղագիտական միության փոխպրեզիդենտ,



Վ. Ա. Համաբաձույան

1961—64-ին՝ նույն միության պրեզիդենտ, իսկ 1968—1972-ին՝ գիտական ընկերությունների միջազգային խորհրդի պրեզիդենտ:

Ավարտել է Լենինգրադի համալսարանը (1928), 1928—31-ին սովորել է ՍՍՀՄ ԳԱ զվաճվոր (Պուլկովյան) աստղադիտարանի ասպիրանտուրայում, ակադեմիկոս Ա. Ա. *Բեկուրցիկյան* ղեկավարությամբ: 1931—43-ին աշխատել է Լենինգրադի համալսարանում (1934-ից՝ պրոֆեսոր): Եղել է ՍՍՀՄ-ում առաջին աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչը (1939), Լենինգրադի համալսարանի աստղադիտարանի ղեկավարը (1939) և ուսումնական մասի պրոռեկտորը (1941): 1943-ից աշխատում է Հայկ. ՍՍՀ-ում, որի ԳԱ հիմնադիր անդամներից է և առաջին փոխպրեզ. չեմպը: Հ. մեծ ավանդ ունի Հայկ. ՍՍՀ-ում ֆիզմաթ գիտությունների զարգացման, բնական և տեխ. գիտությունների բնագավառում հետազոտությունների մակարդակի կտրուկ բարձրացման, նոր, ժամանակակից գիտական ուղղությունների ստեղծման և բարձրորակ կարերի պատրաստման գործում:

Աշխատանքները վերաբերում են տեսական աստղաֆիզիկայի, աստղերի ու միգամածությունների ֆիզիկայի, աստղաբաշտության ու աստղային դիսկոնիկայի, արտագաղակտիկ աստղագիտության, աստղերի և գալակտիկաների էվոլյուցիայի (տես *Կրամոզոնիս*) հարցերին: Ստեղծել է զագային միգամածությունների լուսաբանական բանական տեսությունը, որը հիմք է ծառայել այդ բնագավառում կատարված հետազոտությունների համար: Մշակել է նոր աստղերից արտաբերվող և անկախ աստղերի մակերևութային արտահոսող զագային զառվածների գնահատման մեթոդ: Ստացված գնահատականները Հ-ին թույլ տվեցին գտնել աստղերի վիճակների փոփոխությունների առաջին նշանները: Մշակել է աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները: Ցույց է տվել, որ աստղերի մերձեցումների հեռաներքով առանձին աստղերի հեռացման պատճառով աստղակույտերն աստիճանաբար քայքայվում են: Քայքայման արագությունից ընկերվ՝ գնահատել է աստղակույտերի տարիքը: Կրկնակի աստղերի նկատմամբ նոր մեթոդների կիրառման միջոցով հիմնարկել է Գալակտիկայի տարիքի կարճ (10¹¹ տարի) ամողայնը: Ցույց է տվել, որ լույսի միջատողային կլանումը Գալակտիկայում հարուցվում է ոչ թե անընդհատ միջավայրի, ինչպես ընդունված էր նախկինում, այլ բազմաթիվ մութ, փոռային միգամածությունների՝ կլանող ա-

պերի առկայությամբ, որոնք կենտրոնացված են նրա սիմետրիայի հարթության շուրջը: Այդ ամպերի ուսումնասիրության համար Հ. մշակել է ֆուլկուտացիաների տեսությունը: Ստեղծել է պտոր միջավայրում լույսի ցրման յուրօրինակ տեսություն, որը հիմնված է իր առաջարկած ի և լ ա ր ք Ի ա տ ո թ ք ա յ ա ս կ ք գ ու ը ի յ ր ք և ա տ ք Ի ք է պրոբեմի ճշգրտել լուծումը: Իվարիանտության սկզբունքը դարձավ աստղաֆիզիկայի, ֆիզիկայի և երկրաֆիզիկայի մի շարք խնդիրների լուծման հզոր միջոց: Այդ սկզբունքի հիմուն գծային Հ. ստացել է նաև լույսի ցրման ոչ զագային տեսության որոշ խնդիրների լուծումներ: 1947-ին Հ. հայտնագործել է նոր տիպի (դիսանիկական տեսակետից անկախ և քայքայվող) աստղային համակարգեր, որոնց անվանվել է *աստղափայտաներ*: Հ-ի հաստատված աստղափայտների երեստությունը աստղային կոմպոզիցիայի մի շարք սկզբունքային պրոբլեմների լուծման հիմք ծառայեց: Ապագուցվեց, որ Գալակտիկայում աստղառաջացման պրոցեսները ներկայումս շարունակվում են և ունեն խմբական բնույթ: Բացառապես է Թ Ցույի տիպի և բռնվվող աստղերի տեղը աստղային էվոլյուցիայի ընդհանուր շղթայում, որպես զարգացման ամենավաղ փուլերի ներկայացուցիչներ: 1950-ական թթ. Հ. հայտնագործել է գալակտիկաների կենտրոնական խտացումների՝ գալակտիկաների կորիզների ակտիվությունը, որը հարուցում է հսկայական մասշտաբների ակտիվ տերություններ (վիթերայի պայթյուններ, նյութի մեծ զանգվածների արտաձիծումներ, նյութի հանգիստ արտահոսք, աստղիգալակտիկաների դեպրեսիոն հզոր ռադիոառաձայնություն են): Մշակել է նախաստղերի վարկածը, որը հիմնվում է Տիեզերքում նյութի առայժմ անհայտ վիճակների գոյության ենթադրության վրա: Ըստ այդ վարկածի, նախաստղերը մեծ խտությամբ օժտված փոքր չափերի մարմիններ են, որոնք, տրոհվելով, սկիզբ են դնում աստղերին և աստղային համակարգերին: Նախաստղերի վարկածի կապակցությամբ Հ. տվել է աստղերի գերխիտ կոնֆիգուրացիաների տեսության հիմունքները: Հ-ի մշակած սկզբունքներն ընկած են աստղերի և գալակտիկաների էվոլյուցիային վերաբերող «*Բյուրակային ուղղություն*» հիմքում: Ֆիզիկական և աստղագիտության մեջ նախնական *հակադարձ ինդիքների* լուծման կարևոր արդյունքներ է ստացել: Հ. գիտության մեջ հիմք է դրել նոր ուղղությունների, Լենինգրադում և Բյուրակայինում ստեղծել գիտական դպրոցներ, որոնք մեծ ազդեցություն են թողնում աստղագիտության շատ բաժինների զարգացման վրա: ՍՍՀՄ III- և Գ ռուստարիտների Գերազանց տվեցի դեպտատ: Արժանացել է ՍՍՀՄ պետ. մրցանակների (1946, 1950): Ընտրվել է ԱՄՆ-ի ակադեմիկոս (1950), Ասգիլայի (Լոնդոնի թագավորական ընկերություն, 1969), Ապոստոխայի (1975), Ալմադիայի (1956), Բեզգիայի (Լեհի թագավորական գիտական ընկերություն, 1953), Բուլղարիայի (1974), ԳԳՀ-ի (Բելուրի, 1957), Իսպանիայի (1967), Հուլանդիայի (1970), Հնդկաստանի (1976),

Նյու Յորքի (1974), Յրանսիայի (1958, 1974), Շվեդիայի (1973), Չեխոսլովակիայի (1971) գիտությունների ակադեմիաների և Բեռլինի Գերմանական Լեռնադիրների ակադեմիայի (Հայլե, ԳՊՀ, 1959) օտարերկրյա անդամ, Ատոմազանցության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ (1978), Միջազգային ատոմազանցության միության անդամ (1948), Արվեստների և գիտությունների ամերիկյան ակադեմիայի (Բոստոն, 1957), Քենթրիքի (Անգլիա, 1969) փիլիսոփայական, ԱՄՆ-ի (1947), Կանադայի (1959), Մեծ Բրիտանիայի թագավորական և Խաղաղօգնականության ատոմազանցության ընկերությունների (1953) և Արդթեյնական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի (1972) պատվավոր անդամ:

Պարգևատրվել է Լոնոնտոսի, Վալիլովի, Հելմհոլցի (ԳՊՀ), ժամանակի (Քրանսիա), Բրյուսելի (ԱՄՆ), «Լեռնադիրնա» ակադեմիայի Կոնսերնուսի (ԳՊՀ) անվ., Սլովակիայի ԳԱ և Մեծ Բրիտանիայի թագավորական ատոմազանցության ընկերության մեդալներով:

Ավստրալիայի ազգային (Կանբերա, 1963), Լիեծի (Բելգիա, 1967), Կարլովի (Պրագա, 1967), Լա Պլասայի (Արգենտինա, 1974), Մոսկոյի (Փարիզ, 1965), Տոնոնի Կոպենհեյկոսի անվ. (Լեհաստան, 1973) համալսարանների պատվավոր դոկտոր: Պարգևատրվել է Լեհիևի իննգ, Աշխատանքային կարմիր դրոշի երկու և այլ շքանշաններով ու մեդալներով:

Երկ. Գալակտիկաների և կոսմոս կորիզները, «Գիտություն և տեխնիկա», 1964, № 1: Տիեզերքի էվոլյուցիայի պրոբլեմները, Ե., 1963: Научные труды, т. 1—2, Е., 1960; Проблемы внегалактических исследований, в кн.: Вопросы космологии, т. 8, М., 1962; Нестационарные объекты во Вселенной и их значение для исследования происхождения и эволюции небесных тел, в кн.: Проблемы современной космологии, 2 изд., М., 1972; Философские вопросы науки о Вселенной, Е., 1973; On the Evolution of Galaxies, «La structure et l'évolution de l'univers», Bruxelles, Ed. S. Skoops, 1958; On the Nuclei of Galaxies and Their Activity, «The structure and Evolution of Galaxies», Interscience Publishers, London—New York—Sydney, 1965.

Գրկ. Վ. Համբարձումյան (կենսագրական-հիշատակություն), Ե., 1958: Մ ի ը ղ յ յ յ և Վ. Վ., Վիկտոր Համբարձումյան (ծննդյան 70-ամյակի անթիվ), Ե., 1978: В. А. Амбарцумян [био-биография], Е., 1954; В. А. Амбарцумян [био-биография], М., 1975.

Լ. Միրզայան
ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ ՕՖեյլյա Կարապետի (ծն. 9.1.1925, Երևան), հայ սովետական երգչուհի: ՎՍՍՀ ժող. արտիստուհի (1959): Չայնաժական դաշտից սանցել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. ուսումնարանում (նաստուտ)՝ Ս. Մուսիկյանի): 1944-ից ռադիոյի ժող. գործիչների անսամբլի սենյակատարուհի: Մասնակցել է Սայաթ-Նովայի երգերի կատարման մրցույթին (առաջին մրցանակ): Համերգազանկն ընդգրկում է հայ ժող., օրուսնաաշունդական, սովետական կոմպոզիտորների, նաև ռուս., ադրբ., մոլդավ., չեխական երգեր:

ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ ԻՆՎԱՐԻՄՆՍՈՅԱՆ ՍՎԵՐՈՒՆԷ. Ճառագայթման տեղափոխման կամ մասնիկների դիֆուզիա

յի պրոցեսների ուսումնասիրության արդյունավետ եղանակ: Առաջարկել է Վ. Հ. Համբարձումյանը 1942-ին՝ տեսական աստղաֆիզիկայի խնդիրների լուծման համար: Ինվարիանտության սկզբունքի հիման վրա Համբարձումյանը մշակել է պողոտ միջավայրերում լույսի ցրման արդի տեսությունը (ՍՍՀՄ պետ. մրցա-նալ, 1946):

Կիսավերջ միջավայրերի դեպքում, ըստ Հ. ի. Վ-ի, միջավայրից մտուղի կամ մայական հաստության շերտ անջատելիս միջավայրը մնում է զարձայ կիսավերջ: Ընդ որում միջավայրի անդրադարձման հատկությունն էլ է մնում անփոփոխ (ինվարիանտ): Վերջավոր հաստության միջավայրի դեպքում շերտի հատկությունները մնում են անփոփոխ, եթե դրա մի եզրից ավելացվում, իսկ մյուս եզրից նեղացվում է միևնույն հաստության շերտ: Լույսի ցրման ֆիզիկական պրոցեսների մեջ ավելացվող և անջատվող շերտի ներդրման հաշվառումն ու համապատասխան մաթ. խնդրի լուծումն առավել արագ են դառնում, եթե այդ շերտն անվերջ ըարակ է: Այս դեպքում Հ. ի. Վ. գործնականում առավել արդյունավետ է: Ընդհանուր դեպքում, միջավայրի տրոնումը երկու բաղադրիչների և դրանցում լույսի ցրման պրոցեսների փոխկապակցությունը հանգեցնում են ինվարիանտության չորս առանձին սկզբունքների և յուրօրինակ ֆունկցիոնալ պայմանությունների, որոնք նույնպես կոչվում են Համբարձումյանի անունով: Ինվարիանտության սկզբունքները զարգացնում են առցանց ՍՍՀՄ-ում՝ Վ. Հ. Համբարձումյանի ու Վ. Ս. Մորդուխի, ԱՄՆ-ում՝ Ս. Չանդրասեկիարի և Ռ. Բելմանի խմբի աշխատանքներում:

Հ. ի. Վ. կիրառվում է Արեգակի և մոլորակների մթնոլորտների հատկությունների և առողորի ընդերքում կատարվող ֆիզիկական երևույթների ուսումնասիրություններում, ինչպես նաև երկրի մթնոլորտի և քրային ավազանների երկրաֆիզիկական հետազոտություններում:

Գրկ. С о б о л е в В. В., Перенос лучистой энергии в атмосферах звезд и планет, М., 1956; Амбарцумян В. А., Научные труды, т. 1, Е., 1960, с. 223—268; М н а ц а к а я և յ յ Մ. А., К решению задачи переноса излучения в полубесконечных средах, «Сообщения Бюраканской обсерватории», т. 50, 1978.

Մ. Սիլվակյան
ՀԱՄԱՐՉԱՆ Ազատ Սարգսի (ծն. 1926, Գ. Սարգսի, (ՎՍՍՀ Բոզորտովկայի Էրջանում)), հայ տոնկանական պատմաբան: Ավարել է Լենինականի մանկավարժական ինստ-ի պատմության ֆակուլտետը: Գտնմական գիտ. դ-ր (1966), սովետեր (1976): ՍՍԿԿ անդամ 1948-ից: ՎՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ (1979): Հ-ի ուսումնասիրությունները վերաբերում են հայ ժողովրդի պատմության նոր շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին:

Երկ. Ազարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Ե., 1965: Երկրորդի սկզբին և հողային բաղաբանությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), Ե., 1978: Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), Е., 1959.

Ս. Մ. Համբարձյան



ՀԱՄԱՐՉԱՆ Խաչիկ Մինասի [ծն. 22.9. 1919, Գ. Լաբրուել (Սպիտակի շրջանում)], գեներալ-գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու (1969): ՍՄԿԿ անդամ 1939-ից: Ավարուել է Մ. Ֆ. Ֆրունզեի անվ. ռազմական ակադեմիան (1948) և Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան (1959): Հայրենական մեծ պատերազմի ժամանակ եղել է մոտոտիրաձայի ղապալի, վաշտի, գումարտակի, 1944-ից՝ գնդի հրամանատար: Աչքի է ընկել բերդուսական Ռոզայով և Շոթրի բաղաբների համար մղված մարտերում, Գորոդուկյան օպերացիայի (1943) և Բյուխբաբերգի (Վալիկգրադ) գրոհի (1945) ժամանակ: Ետպատերազմյան տարիներին պատասխանատու պաշտոններ է վարել Սովետական Միության պաշտպանության մինիստրությունում, ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարությունում, եղել է ցամաքային զորքերի ռազմական խորհրդի անդամ:

Պարգևատրվել է Լենինի (2), Կարմիր դրոշի (4), Կարմիր ստաղի (2), Հայրենական պատերազմի II աստիճանի (2) շքանշաններով և մեդալներով:

Ա. Ղապարյան

Ս. Մանթրոյ

ՀԱՄԱՐՉԱՆ անե Ամբրոյ:
ՀԱՄԱՐՉԱՆ (Hamburg, Hansestadt Hamburg), բաղաբ և նավահանգիստ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում: Արտաքին առևտրի, արդյունաբերության, բանկային և ապահովագրական գործի կենտրոն է, երկաթուղային, ավտոմոբիլային և օդային հաղորդակցությունների հանգրուց: Գտնվում է Էլբա գետի ափերին: Վարչականորեն կազմում է Համբուրգ երկիրը: 1857, 4 հոգ. բն. (1978): ԳՖՏՀ-ի անկտրական նավատորմի տնտեսի 2/3-ը բաժնի է ընկնում Հ-ին: Զարգացած է ընդհանուր մեքենաշինությունը, նավաշինությունը, ավիաշինությունը, էլեկտրատեխ. (ռեժեկտիվայն ապարատներ, էլեկտրաշարժիչներ, ադիտագրատուրա են), ռետինի-ապրեստի, պոլի-

Տեսարան Համբուրգից

